ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՄՐԱՆ ԱՐՏԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

✓ **«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»** բաց բաժնետիրական ընկերությանը ապրանքների նեմուծման դեպքում տրամադրվել է մաքսատուրքից ազատման արտոնություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման կարգը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» N 1118-Ն որոշման: Ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է 25.9 մլրդ դրամ: Ընդհանուր արժեքի մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է ***1.5 մլրդ դրամ:***

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման շրջանակներում «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերությունը սարքավորումների ձեռք բերման նպատակով բանկերից ներգրավել է շուրջ ***12 մլրդ դրամի վարկային (կամ լիզինգով) միջոց:***

✓ **«ՔԱՐԱԿԵՐՏԻ ՔԱՐԱՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ»** բաց բաժնետիրական ընկերությանը ապրանքների նեմուծման դեպքում տրամադրվել է մաքսատուրքից ազատման արտոնություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման կարգը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» N 1118-Ն որոշման: Ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է 1.45 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է **շուրջ 80** ***մլն դրամ:***

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման շրջանակներում

«*ՔԱՐԱԿԵՐՏԻ ՔԱՐԱՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ*» բաց բաժնետիրական ընկերությունը սարքավորումների ձեռք բերման նպատակով բանկերից ներգրավել է շուրջ ***840 մլն դրամի վարկային (կամ լիզինգով) միջոց***:

✓ **«ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ՀՀ կառավարության 2024 թվականի 52-Ա որոշմամբ պետության կողմից տրվել է օժանդակություն՝ 3.5 մլրդ դրամ բյուջետային վարկ 8 տոկոս տարեկան տոկոսադրույքով, 4 տարի՝ սկսած 3-րդ տարվանից մարման ժամկետով:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման շրջանակներում «ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սարքավորումների ձեռք բերման նպատակով բանկերից ներգրավել է շուրջ ***3 մլրդ դրամի վարկային (կամ լիզինգով) միջոց:***

✓ ***«Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերությունը*** ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման շրջանակներում սարքավորումների ձեռք բերման նպատակով բանկերից ներգրավել է շուրջ **1,8 մլրդ դրամի վարկային միջոց:**

«*Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերությունը* ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի ««Տ-ՄԵՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությանը «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառելու մասին» N 473-Ա որոշմամբ ներառվել է «Էկոս» ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում:

* ***ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման շրջանակներում տրամադրված վարկի/լիզինգի տոկոսադրույքը պետության կողմից սուբսիդավորվում է դոլարային աժույթով 6-8% չափով, իսկ դրամով 8-10% չափով:***